ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 459

2 հոկտեմբերի 2025 թվականի N - Ա

ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի «Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին» N 7-Ա որոշմամբ հաստատված կարգի՝

ո ր ո շ ու մ ե մ.

Ուսուցչի օրվա կապակցությամբ, կրթության ոլորտում երկարամյա և նվիրված աշխատանքի, սերունդների կրթության գործում նշանակալի ավանդի, սովորողների մասնագիտական կարողությունների ձևավորման գործում ցուցաբերած հետևողականության և մասնագիտական նվիրումի համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների և մարզադպրոցների տնօրեններին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.Ղուկասյան**

2025 թ. հոկտեմբերի 2

ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2025թ. հոկտեմբերի 2-ի
N 459-Ա որոշման

Ցանկ

Ուսուցչի օրվա կապակցությամբ ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրվող մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների և մարզադպրոցների տնօրենների

	Տնօրենի ազգանուն,անուն	Ուսումնական հաստատության անվանում
1	Զաքարյան Էլմիրա	Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց
2	Բուլբուլյան Օլյա	Խնձորեսկի Գ.Սևունցի անվան միջնակարգ դպրոց
3	Սևումյան Վերա	Ալվանքի միջնակարգ դպրոց
4	Աղաբեկյան Տիգրան	Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց
5	Այվազյան Ռաֆայել	Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց

Recoverable Signature

X

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

Գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան